Սիպիլ

Խոսք ընդ աստծո

Աստվածությամբը բարի հոգվույդ անծայր ու անծիր,
Եթե դուն մայր ըլլայիր,
Փոխակ հայր ըլլալու,
Աշխարհք արդյոք չէ՞ր բարձրանար առանց արցունք մը լալու:

Դեռ նորածիլ՝ կը մեռնե՞ր դաշտին ծաղիկն առաթուր
Նախիրներու կաշըմբուռ
Սմբակին տակ ոգեսպառ,
Աստվածային հոգիդ գթած եթե գրգար մայրաբար,

Անշուշտ խուժին կը հաղթեր գութը՝ ուժեն ալ արի,
Թըփուտներու կամ սարի
Թռչնիկն անեզեն ու տկար՝
Այունախանձ ուրուներու ճիրանին տակ չէր տըքար:

Եթե դուն մայր ըլլայիր, մարդը կ՚ըլլար անձին տեր,
Ազատ, անկեղծ, անվեհեր.
Երախտիքի բեռան տակ,
Հոգին երբեք չէր կորանար անարգ նյութին նահատակ:

Ա՜հ, եթե մայր ըլլայիր, հանդուրժեիր պիտի լուռ
Երբ գեղարդին ներքև սուր՝
Կողեն արյուն կը պոռթկար

Հիսուսիդ որ կը պաղատես. «Գրքա՛, մարմինս է տրկար»:

Եթե դուն մայր ըլլարի, բիբովդ անհուն, որ բոց էր,
Արդյոք չէի՞ր թափանցեր

Խորախորհուրդ աչքերուն
Հոգիին որ հավես կուլա թոշնած երազն իր գարուն:

Ո՜հ, կ՚ըղձայի, կ՚ըղձայի՝ մայր ըլլայիր պահ մը լոկ
Հանդեպ կյանքին անողոք
Օրենքնե՛րուն անսասան,
Եվ ըզգայիր թե սրտեդ մայրդիկ ի՜նչ սեր կը հուսան:

1924